Արձանագրություն 4
«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/94» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

21.08.2019թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին

Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Նավասարդյան

Հանձնաժողովի անդամներ՝ Է. Գալստյան, Հ. Մելքումյան, Կ. Հակոբյան, Ա. Ոսկանյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Եղիազարյան

1. «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/94» ծածկագրով գնման ընթացակարգի անհամապատասխանությունը շտկելու մասին

(Հ. Նավասարդյան)

Ընդունել ի գիտություն, որ «Երևաննախագիծ» ՓԲԸ-ի կողմից հրավերով սահմանված ժամկետում շտկվել է հայտում առկա անհամապատասխանությունը և գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել բավարար:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

2. «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/94» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Հ. Նավասարդյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 1-ին կետը և հաշվի առնելով, որ մասնակիցը հրավերով սահմանված ժամկետում (երեք աշխատանքային օր) ներկայացրել է հրավերով սահմանված որակավորման չափանիշները բավարարող փաստաթղթերը՝ հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցում գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
«Երևաննախագիծ» ՓԲԸ	բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. «ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/94» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի մասին

(Հ. Նավասարդյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունած որոշումը՝ **«ԵՔ-ԳՀԱՇՁԲ-19/94» ծածկագրով գնանշման** հարցում ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել «Երևաննախագիծ» ՓԲԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Հ. Նավասարդյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 3-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝

- **Երևանի քաղաքապետարանի կարիքների համար Երևան քաղաքի թվով 16 չկարգավորվող հետիոտնային անցումները «Հետիոտնային կանչի» ռեժիմով աշխատող**

լուսացուցային համակարգով կահավորելու նպատակով համակարգերի տեղադրման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման և փորձաքննության եզրակացության տրամադրման աշխատանքների ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել վերը նշված մասնակցին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4.2 Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝ ..... Հ. Նավասարդյան

..... Է. Գալստյան

..... Հ. Մելքումյան

Անդամներ՝ ..... Կ. Հակոբյան

..... Ա. Ոսկանյան

Համակարգող՝ ..... Ս. Եղիազարյան